ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2015թ. N 83 -Ա

ք.Ստեփանակերտ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 6-ի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 10-ի «2015 թվականի մայիսի 3-ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների վերաբերյալ» N 82-Ա որոշումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 123-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն ***արձանագրում և որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ են ընտրվել.

«Ազատ հայրենիք» կուսակցության ընտրական ցուցակից՝ տասնմեկ պատգամավոր,

«Ազգային վերածնունդ» կուսակցության ընտրական ցուցակից՝ մեկ պատգամավոր,

Արցախի Ժողովրդավարական Կուսակցության ընտրական ցուցակից՝չորս պատգամավոր,

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ընտրական ցուցակից՝ չորս պատգամավոր,

«Շարժում-88» կուսակցության ընտրական ցուցակից՝ երկու պատգամավոր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ